Մի քանի անգամ եւս յիշոեցաւ «սիրելի» վարժապետի անունը. ամէնքը զարմանում էին, թէ ինչու այդքան ուշացաւ նա, եւ ոմանք կասկածում էին՝ մի գուցէ որեւիցէ վտանգ պատահած լինէր նրան:

— Նրա հետ ի՞նչ կարող է պատահել, — նկատեց հիւրերից մէկը, — նա այնպիսի մարդ է, որ ծովը կմտնէ եւ ցամաք դուրս կը գայ:

Տեսնելով, որ այդքան անհանգիստ են վարժապետի մասին, Ասլանը հարցրեց, արդեօք գո՞հ են նրանից:

— Ինչպէ՞ս գոհ չլինել, պարոն բժշկապետ, — պատասխանեց քահանան, — նա ոչ միայն մեր երեխաների վարժապետն է, այլ մեր ամէնի վարժապետն է: Մենք շատ բան սովորեցանք նրանից, այո՛, շատ բան... ոչ այնքանը միայն, որ մի քանի րոպէ առաջ պատմեց ձեզ մեր յարգելի ռեսը:

Հայոց գիւղերում վարժապետը եւ շինական քահանան միշտ անհաշտ եւ հակառակ դիրքի մէջ են լինում միմեանց հետ, այժմ զարմանալի էր լսել քահանայից վարժապետի մասին գոհունակութիւն:

— Ի՞նչ սովորեցաք նրանից, — հարցրեց Ասլանը հետաքրքրութեամբ:

— Շատ բան սովորեցանք, — կրկնեց քահանան համոզիչ եղանակով, — օրինակ, այսօր գիտէ՞ք ինչի համար է նա գնացել սարը, մեր հովիւների մօտ. — այնտեղ պանիր են մակարդում, գնացել է տեսնելու, արդեօք իր պատուերների համեմա՞տ են մակարդում, թէ ոչ: Նա սովորեցրեց մեզ բոլորիս նոր ձեւով պանիր շինել: — Այդ պանիրը, որ հիմա կերաք, ինչպէ՞ս էր:

— Շատ պատուական պանիր էր:

— Այդ նրա սովորեցրած ձեւովն է պատրաստուած: Նա բժշկութիւն էլ է իմանում. երբ գիւղերում հիւանդներ են պատահում, նրան կանչում են, բոլորի մօտ գնում է, ոչ միայն հայերի, այլ մինչեւ անգամ քրդերի մօտ: Երբ փող են առաջարկում, նա վիրաւորւում է:

— Բժի՞շկ է:

— Ո՛չ, այնպէս, գրքեր կարդալով սովորել է, բայց մի լաւ բժշկից աւելի է իմանում: Նա մեր երեխաների դասատուութեան համար էլ ոչինչ վարձ չէ ընդունում, ասում է՝ ինձ փող հարկաւոր չէ, ինձ մի կտոր հաց տուէք ուտեմ եւ մի տեղ տուէք պառկեմ, այդքանն էլ բաւական է: Մի խօսքով, զարմանալի անշահասէր մարդ է:

— Ուրեմն գիւղացիք սիրո՞ւմ են նրան:

— Իրանց հոգու պէս: Նա մեր երկրագործական մշակութիւնների մասին եւս շատ օգտաւէտ խորհուրդներ է տալիս. ինչ որ նրա խորհրդի համե-